

**Հայաստանի Հանրապետությունում 2014թվականին անցկացվելիք  
գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման  
և անցկացման համապետական հանձնաժողովի  
2014 թվականի հունիսի 13-ի նիստի**

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 40 անդամներից՝ 31-ը:

**Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի (նոյեմբերի 10-30-ը ներառյալ) փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման հաշվետվության (ամփոփված 01.04.2014թ. դրությամբ) ներկայացում:
2. ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագրի (հարցաշարի) հավանության հարցը:
3. ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2014թ. մարտի 10-ի թիվ 14-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթի լրացման համար ՀՀ գյուղական համայնքների ղեկավարներին հանձնարարականներ տալու մասին հարցը (գյուղական համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի կառուցվածքի վերաբերյալ՝ ըստ սեփականության սուբյեկտների, նախնական տեղեկատվության հավաքագրման նպատակով):
4. Այլ հարցեր:

**Բացման խոսքով** հանդես եկավ նիստը նախագահող՝ ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի նախագահ, ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ **պրն.Ա.Գևորգյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին և առաջարկեց աշխատանքային քննարկումները կազմակերպել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից նախապես ներկայացված օրակարգի հաջորդականությունով: Առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը փոխանցեց հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ պրն. Ս.Մնացականյանին:

**Ս.Մնացականյանը** շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին և անդամներին մասնակցության համար: Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության 2013 թվականի (նոյեմբերի 10-30-ը ներառյալ) փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման հաշվետվությունը (ամփոփված 01.04.2014թ. դրությամբ): Նրա կողմից նշվեց, որ փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառումն անց է կացվել հանրապետության Արարատի, Կոտայքի և Տավուշի մարզերի 7 համայնքներում: Ներկայացվեց փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստական, կազմակերպական, իրականացված դաշտային, փաստաթղթերի ընդունման-հանձնման, հավաքագրված տեղեկատվության մշակման աշխատանքները և հաշվառման ընթացքում առաջացած (բացահայտված) հիմնախնդիրները:

**Նիստը նախագահողի առաջարկությամբ զեկուցողին ուղղվեցին հարցեր.**

«Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի կողմից հնչեցվեց հարց կապված հաշվառման արդյունքում հավաքագրվող անհատական տվյալների գաղտնիության վերաբերյալ:

Ի պատասխան հնչեցված հարցին **Ս.Մնացականյանը** մեջբերում կատարեց «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» «Օրենքի համապատասխան հոդվածից (հոդված 8) և նշեց, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ անհատական տվյալներին տիրապետող լիազոր մարմնի աշխատակիցներին արգելվում է այլ անձանց հաղորդել հաշվառման լրացված փաստաթղթերի բովանդակությունը, ինչպես նաև գյուղատնտեսական հաշվառման սկզբնական նյութերը դատական, դատաքննչական և այլ մարմինները որպես ապացույց չեն կարող օգտագործել:

**Ա.Գևորգյան** - Եղե՛լ են արդյոք հարցաթերթի հարցերին պատասխանելուց հրաժարվելու դեպքեր:

**Ս.Մնացականյան** - Նախքան փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառման սկսելն այցելություններ են կատարվել հաշվառման մեջ ընդգրկված մարզերի մարզպետարաններ, որտեղ հանդիպումներ են կազմակերպվել հաշվառման մեջ ընդգրկված համայնքների ղեկավարների հետ: Նրանց ներկայացվել է համատարած հաշվառման նպատակը, դրա կազմակերպման և իրականացման ողջ գործընթացը, կարևորելով նրանց դերն այդ գործընթացում: Մասնավորապես, կարևորվել է բնակչության իրազեկման աշխատանքներում գյուղապետերի և գյուղապետարանների աշխատակազմերի մասնակցության դերն ու նշանակությունը: Համայնքներում հաշվառման նպատակի ճիշտ լուսաբանման արդյունքում ընդհանուր առմամբ համայնքներում բնակչությունը բարյացակամ է տրամադրված եղել գործընթացի նկատմամբ և այդ առումով խնդիրներ չեն առաջացել, բացառությամբ հարցաթերթի հարցերին պատասխանելուց

հրաժարվելու մեկ-երկու դեպքի, որոնք էլ համայնքի ղեկավարի կողմից տվյալ քաղաքացիների հետ բացատրական աշխատանք տանելուց հետո, լրացվել են:

***Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ հաշվետվությունը հանձնաժողովի կողմից ընդունվեց ի գիտություն:***

**Ս. Մնացականյանի** կողմից ներկայացվեց 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման (ԳՀՀ) ծրագրի (հարցաշարի) նախագիծը: Նրա կողմից նշվեց, որ հարցաշարը մշակվել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ուղեցույցերի համաձայն, միջազգային փորձագետների և ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետների աջակցությամբ: ***Հանձնաժողովը հավանության արժանացրեց ծրագրի (հարցաշարի) նախագիծը***, որը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը: Նշվեց, որ հարցաշարի նախագիծը տեղակայված է ՀՀ ԱՎԾ կայքէջում:

**Ա. Գևորգյանն** առաջարկեց ՀՀ ԱՎԾ և ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչներին այցելել մարզեր, մասնակցելու համար մարզային խորհուրդների նիստերին, որոնց ընթացքում համայնքների ղեկավարներին կներկայացվեն ՀՀ-ում ԳՀՀ-ի իրականացման նպատակի և կազմակերպման հետ կապված հարցեր /պարզաբանումներ/:

Օրակարգի հաջորդ հարցը վերաբերում էր գյուղական համայնքների ղեկավարների կողմից «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում գյուղական համայնքներում գյուղատնտեսական համատարած հաշվառման 2-ԳՀՀ» հարցաթերթի լրացման կազմակերպչական աշխատանքներին (ՀՀ գյուղական համայնքների ղեկավարներին հանձնարարականներ տալուն):

**Ս. Մնացականյանը** ներկայացրեց հարցաթերթը, դրանում ընդգրկված ցուցանիշները և դրանց անհրաժեշտությունը ԳՀՀ

կազմակերպման և իրականացման գործընթացում: Նա դիմեց **Ա. Գևորգյանին** խնդրանքով, տալ համապատասխան հանձնարարական համայնքների ղեկավարներին նշված հարցաթերթը լրացնելու համար:

**Ա. Գևորգյանն** առաջարկեց հարցաթերթը տրամադրել մարզպետներին, որոնք էլ հարցաթերթը կտրամադրեն համայնքի ղեկավարներին դրանք լրացնելու համար: **Ձեռք բերվեց պայմանավորվածություն**, որ լրացված հարցաթերթերը համայնքների ղեկավարները **մինչև ս/թ հուլիսի 5-ը** պետք է ներկայացնեն ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ:

**Ա. Մնացականյանը** նշեց, որ 2014թ. ԳՀՀ կազմակերպման և անցկացման շրջանակում համապատասխան գրությունով (27.05.2014թ. 24-1-695) դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ՀՀ ԱՎԾ-ին համապատասխան տվյալներ տրամադրելու նպատակով և խնդրեց, որ գրությունով հայցվող տեղեկատվությունը հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրվի ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը:

Հանձնաժողովում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ներկայացուցիչը նշեց, որ ՀՀ ԱՎԾ կողմից հայցվող տեղեկատվությունը նշված կտրվածքով ՀՀ ԱՎԾ տրամադրելու համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնք ժամանակատար և աշխատատար են:

**Ա. Գևորգյանը**, հաշվի առնելով նշված աշխատանքի ծավալուն բնույթը, առաջարկեց տեղեկատվությունը տրամադրել փուլերով, ըստ մարզերի պատրաստվածության: **Ձեռք բերվեց պայմանավորվածություն**, տեղեկատվության տրամադրման վերջնաժամկետը սահմանել **ս/թ օգոստոսի 1-ը**:

Նիստի ընթացքում քննարկվեց նաև ԳՀՀ կազմակերպման և անցկացման աշխատանքներում ներգրավվող աշխատակիցերի /կադրերի/ հարցը:

**Գ. Գևորգյանը** նշեց, որ ընդհանուր առմամբ ԳՀՀ կազմակերպման և անցկացման աշխատանքների իրականացման համար կպահանջվի շուրջ 6000 աշխատող, որից ավել քան 500-ն արդեն ս/թ հուլիսին:

**Ա. Գևորգյանը** կարևորելով ԳՀՀ դերը, առաջարկեց ՀՀ մարզպետներին ՀՀ ԱՎԾ մարզային գործակալությունների պետերի հետ համատեղ, քննարկելով և համագործակցելով լուծել հաշվառումն իրականացնելու համար անհրաժեշտ աշխատուժ ներգրավելու հարցը:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ **Ս. Հարությունյանը** նշեց, որ կան փաստեր, երբ օրինակ, վարելահողերի վրա հիմնվում են բազմամյա տնկարկներ կամ հակառակը և համապատասխան փոփոխությունները չեն փաստվում: Ի՞նչ սկզբունքով են լրացվելու հարցաթերթերը նման դեպքերում:

**Ս. Մնացականյանը** նշեց, որ վիճակագրությունն արձանագրում է փաստը, այսինքն՝ անկախ նրանից տվյալ հողատարածքի վերաբերյալ սեփականության իրավունքի վկայականում ինչ գործառնական նշանակություն է արձանագրված, հարցաթերթում նշվելու է տվյալ հողատարածքի փաստացի օգտագործման ուղղությունը:

Նիստի վերջում **Ա.Գևորգյանի** կողմից մեկ անգամ ևս կարևորվեց ՀՀ – ում ԳՀՀ-ի անցկացումը և նշվեց, որ այն ՀՀ-ում անց է կացվում առաջին անգամ, ինչով էլ պայմանավորված կարևորվում է հանրային իրազեկման համապատասխան աշխատանքների իրականացումը: Նրա կողմից առաջարկվեց այդ աշխատանքներն իրականացնել բոլոր հնարավոր միջոցներով (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ և այլն) հնարավորինս պարզ և բնակչության համար մատչելի /ընկալելի/ ձևաչափով, նպատակ

ունենալով հանրության շրջանում գործընթացի նկատմամբ ձևավորել  
փոխըմբռնման և վստահության մթնոլորտ:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**ՀՀ փոխվարչապետ,**

**ՀՀ տարածքային կառավարման նախարար**

**Ա. Գևորգյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության**

**աշխատակազմի գյուղատնտեսության**

**վիճակագրության բաժնի պետ**

**Ա. Ավագյան**